

արմատները կը ճիւղաւորէր երկրէ երկիր, աստուածապարզէն իր խորհուրդներուն զօրութեամբ ստեղծելով հողիններու մէջ երանական աշխարհ մը սրբութեան:

Մենք Հայերս, պարծանքով կրնանք տալ անունը մեր քաջարի Տրդատ թագաւորին, որ ամէնքէն առաջ, պաշտօնապէս, իր ազգատոհմով ու ժողովուրդով ծունկի եկաւ, 314ի աշնան, արդարութեան արեգակին առջեւ, եւ մկրտութեամբ՝ զինուորազորուեցաւ երկնքի արքայութեան:

Ուրախ լեւր, Սուրբ Եկեղեցի, կը դռնէին այդ օրը հայ սարկաւադները. քանզի երկիրս երկինքէ եղեմ այսօր վերստին քննուամբ, կը պատասխանէին, Արածանիկ միւս ափէն, նորակառու ժողովուրդն ու քահանաները Հայոց աշխարհին: Եւ ձեռք ձեռքի տուած՝ կը կանգնէին լոյսի խորանը հրաշակերտ, զոհելով միանուագ թէ ահա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Իսկ աստղը լուսաշող կը քալէր դէպի նոր հորիզոններ՝ երկնքի արքայութեան ցոլքերը սփռելու նաեւ ուրիշ ժողովուրդներու վրայ, որոնք մեզմէ ետք, մեզի նման կու գային պաշտելու Քրիստոսի Աւետարանը: Եւ ազգեր ու ցեղեր կ'եղբայրանային աստուածային որդեգրութեամբ եւ քրիստոնէական զրոյշմով. հայ եւ ասորի, յոյն եւ հնդիկ, զպոլի ու եթովպացի, մար ու պարսիկ, սլաւոնացի ու լատին, զազգիացի եւ սաքսոն, սլաւ ու լեհ, թէեւ տարբեր իրարմէ՝ իրենց դոյնով ու բարրաւորով, տարբեր՝ նաեւ իրենց ցեղային նկարագրով ու սովորոյթներով, կը քաղցրացնէին իրենց բարքերը դաժան, կը կործանէին բազիններն իրենց հին աստուածներուն, եւ կու գային ձուլուիլ Քրիստոսի մէջ, միեւնոյն հաւատքին դաւանութեամբ, միեւնոյն սուրբ խորհուրդներուն շնորհաբեր մատակարարութեամբ, խաչանիշ զրօշի մը ներքեւ զինուորազորուած:

ՍԻՐՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ուրախ լեւր, Սուրբ Եկեղեցի...: Աշխարհի չորս ծաղկէն ահա Քրիստոսի հետեւորդները կու գան յեղաշրջել հին մշտայնութիւնները. ու բռնութեան տեղ՝ սիրոյ թագաւորութիւն մը կը քարոզեն, սիրոյ կեանք մը կ'ապրին, աստուածային եւ եղբայրական սիրոյ կեանք մը լուսաշող: Սիրոյ տաճար մըն է ինքը, Սուրբ Եկեղեցին. եւ ուր սէր կայ, հոն է հոգեկան հրճուանքը, երկինքը ինքնին. որովհետեւ երկնքի արքայութեան մեծ խորհուրդը սէրն է. սէր է ինքն Աստուած. եւ սէրը՝ նորածին Եկեղեցւոյ նշանաբանը կը դառնայ: «Սիրեցէ՛ք զիրար» ըսած էր աստուածային Վարդապետը. «Ասով պիտի քանգնան ամէնքը՝ քէ դուք իմ աշակերտներս է՛ք, եթէ զիրար սիրէ՛ք» կրկնած էր իր կտակին մէջ: Ու սէրը դարձաւ զօրը համաքրիստոնէական, այլապէս ժողովուրդներ եւ ցեղեր հոգեպէս իրարու ձուլող հզօր տարրը: Տեսէ՛ք թէ ինչպէս զիրար կը սիրեն, կ'ըսէին հեթանոսները առաջին դարուն, խօսելով քրիստոնեաներու մասին, ու կը դարձանային:

Այսպէս քրիստոնէական Եկեղեցին, ծագումով աստուածային, քարոզութեամբ առաքելական, վարդապետութեամբ ու բարոյականով սուրբ եւ աստուածացուցիչ, նկարագրով ընդհանրական ու գերազային, սահմանուած վերանորոգելու համայն մարդկութիւնը, իրեւ նոր ընկերութիւն մը սրբաւանդ հոգիներու, ազատօրէն անցաւ պետական սահմաններէն բռնաւորներու, հզօր աշխարհաւորներու ապարանքներուն մէջ թափանցեց, լեռնանման զփռաւորութիւններու փոթորիկին եւ հալածանքներու կրակին մէջէն քալեց անդադար, երբեմն դեռնադամբաններու տակ ծուրած, երբեմն անապատներու խորը կամ լեռներու կառարներն սպաւինած, միշտ եւ ամէնուր տանելու համար Քրիստոսի խօսքը բեղմաւոր: Ու մինչ այսպէս տարածուելով տիեզերքի բոլոր հանգամանք կ'առնէր սուրբ Եկեղեցին իր քաղցր ու ժողովուրդներ հեղհե-

տէ տալի խորացուցին եւ իւրացուցին քրիստոնէական Հաւատամքն ու Աւետարանը. եւ ահա ստեղծուեցան ծէսեր. կրօնական արարողութիւններն սկսան կատարուիլ ընդ լեզուներով ու ազգային սովորոյթներով. իւրաքանչիւր ազգ կը սկսէր ունենալ ներքին եկեղեցական կազմակերպութիւն. կը բազմանային եպիսկոպոսներն ու կը սահմանուէին եպիսկոպոսապետներ, կառավարելու եւ պահպանելու համար Քրիստոսի Սուրբ Եկեղեցին՝ ամէնէն հեռուոր վայրերու մէջ: Քրիստոսի Եկեղեցին չէր որ ազգային դոյն ու նկարագիր կ'առնէր, այլ ազգերն էին որ կը պատուաստուէին Քրիստոսի Աւետարանին վրայ. ազգերն ու ցեղերն էին՝ որ կ'առնէին աւելի ուժեղ նկարագիր քրիստոնէական, լեզուներն էին որ քրիստոնէական խաղաղութեան եւ սիրոյ միաբարբառ երգը կը հնչեցնէին: Քրիստոնէական Եկեղեցւոյ կենսատույ բեղմաւորութեան արդասիւքն էր ասիկա. յաւիտեան պէս կենսատույ զօրութեան ծաղիկներն էին՝ որ կը բողբոջէին Գոլգոթայէն մինչեւ Արարատ կամ Ոլիմպոս, Յորդանանէն մինչեւ Արաքս կամ Նեղոս:

Այսպիսի ամուր հաւատքով եւ զիտակցութեամբ լուսաւորուած էր նաեւ Հայաստան, հինդերորդ դարուն. եւ մեր անմահ զօրավարները, Կարմիրն Վարդան եւ իր մարտիրոս զինակիցները չէին վարաներ Յաղկերտի դիմաց իրենց դաւանանքն արտայայտելու այսպէս:

«Ոչ է Եկեղեցի շինուած մարդոյ եւ ոչ տուրք արեգակամ... եւ ոչ պարգեւ քաւարաց, եւ ոչ արուեստ փարտաւորեանց, եւ ոչ գիւտք իմաստնոց...: Այլ շնորհք եմ մեծին Աստուծոյ, ոչ միտմ ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց...: Հիմունք մորա եղեալ եմ ի վերայ հաստատուն վիմի. ոչ ներքին շարժել կարեն, եւ ոչ վերին դրդուեցաւանել...» (Եղիշէ, Բ.):

Սքանչելի՛ դաւանանք՝ Սուրբ Եկեղեցւոյ աստուածային ծաղուծին, անդրդուելի միութեան, ընդհանրականութեան եւ անսասան յաւերժութեան մասին:

ՍԿՋԲՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ


Իսկ քարոզութիւնն այդ կենսատու եւ յեղակերպիչ, ընդհանրական Եկեղեցւոյ կազմակերպութեան հետ կը դոյատեւէր անփոփոխ, ինչպէս հիմնած ու սահմանած էր աստուածային Վարդապետն Յիսուս: Ու չէր կրնար այլապէս ըլլալ: Եկեղեցին աստուածային ունէր ծաղում ու կազմակերպութիւն, Քրիստոսի ի սկզբանի կամքով ու կարգադրութեամբ սահմանուած, մինչեւ իսկ վարչաձեւի մանրամասնութեան մէջ. եւ չէր կրնար տոկիւ փոխուիլ: Եթէ դարերուն հետ, նորանոր սերունդներ դային յեղաշրջել անոր ընդ նկարագիրը, տալով մարդկային կազմակերպութեան զրոյժ ու ձեւ, ստով իսկ պիտի հեռանային Հիմնադրին հարազատ զիծէն:

Եւ ի՞նչն էր աստուածային Հիմնադրին զլիսաւոր փափաքն ու կամքը, որ պիտի դառնար նաեւ Ս. Եկեղեցւոյ կական ու հիմնական տարրը: Միութիւնը. միութիւնը՝ իր ընդհանրականութեան եւ տիեզերականութեան մէջ, միութիւնը՝ իր քարոզութեան ու դաւանանքին մէջ, միութիւնը՝ իր կազմակերպութեան մէջ, միութիւնը՝ իր բարոյական կարգապահութեան մէջ, միութիւնը՝ համեղբայրական սիրոյ զգացումին մէջ, միութիւնը՝ ցեղերու եւ ծէսերու զանազանութեան մէջ:

Այս ամբողջական միութիւնն էր որ կը փափաքէր Քրիստոս եւ արիւնախառն արցունքով կը հայցէր զայն Գեթսեմանիի պարտէզին մէջ, վերջին հանդիսաւոր ազօթքին պահուն, իր երկնաւոր Հօրմէն:

Այդ միութիւնն էր նշանաբանը առաջին քրիստոնեաներուն:

«Մէկ է Աստուած. մէկ է Քրիստոս, մէկ է իր Եկեղեցին»: Այսպէս կը բանաձեւէին քրիստոնեաները՝ երբ սէրն ամբողջական էր ու չկային բաժանումներ, չկային հերձուածներ: Երբ եպիսկոպոսներ ու հովուապետներ իրարու կը հաղորդէին սիրոյ ողջոյնին հետ՝ տեղեկութիւններ եկեղեցական անցուղարձեւէն, իրարու հետ



կարծիքներ կը փոխանակէին՝ կարգապահական հարցերու մասին, տարակուսի մը պահուն՝ նախանձախնդիր Եկեղեցւոյ սերտ միութեան՝ վճռական ձայնը կ'ուզէին լսել դերագոյն Եպիսկոպոսապետին, եւ հուսկ՝ իրարու կը զրկէին սուրբ Խորհուրդը, միութեան դերագոյն նշանը եւ կը հաղորդուէին իրարմէ: Այսպէս կը վարուէին իրարու հետ Փոքր Ասիոյ, Ափրիկէի եւ Հռոմի հնազանդ Եկեղեցիներու Հովուապետները, առաջին դարերուն: Այսպէս կը վարուէր նաեւ մերս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ իր երջանկայիշատակ յաջորդները՝ Կեսարիոյ Մետրապոլիտին հետ. այսպէս սիրով կը թղթակցէր մեծն Սահակ՝ Կոստանդնուպոլսոյ Պրոկղ Պատրիարքին հետ:

Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի. այն ատեն սիրոյ ողջոյնը ազանիւ արծաթ թեւերով կը սաւառնէր երկինքէ երկինք, ու սիրոյ նարօտի ոսկեթելով կը միացնէր զամէնքը:

Վէճեր ու տեսակէտի տարբերութիւններ, այո՛, կային առաջին դարուն ալ. սակայն, այն ժամանակ զիտէին պահպանել միութիւնը: Այսպէս, երբ Զմիւռնիոյ Պողոսկարպոս Հայրապետը կու գար Հռոմ, երկրորդ դարու կիսուն, Անիկետոս Պապին հետ խորհրդակցելու՝ Զատիկի տօնակատարութեան հարցին շուրջ, զժրախտաբար անկարելի կ'ըլլար համաձայնութիւն գոյացնել. Պողոսկարպոս կը ներկայացնէր Յովհաննէս Աւետարանիչ առաքելի աւանդութիւնը, իսկ Հռոմը՝ Պետրոս ու Պօղոս առաքելներունը: Բայց սակայն, չի խախտիր եկեղեցական միութիւնը. մեկնելէն առաջ, Պողոսկարպոս կը պատարագէ Հռոմի մայր եկեղեցւոյն մէջ, Պապին ներկայութեան. ժողովուրդը ու կղեր կը հաղորդուին Զմիւռնիոյ արեւելցի եպիսկոպոսին, կը պատմէ Երանոս: Հին սովորութեան մը համաձայն, հիւր եպիսկոպոսը եթէ չուզէր պատարագել, գոնէ բաժակին սրբազործութեան խօսքերը պէտք էր արտասանել: Ու այդպէս միասնաբար կը յայտարարուէին միութիւնն ու սէրը, պահելով հանգերձ որոշ ազատութիւն եւ տարբերութիւն՝ երկրորդա-

կան եւ երկրայայտ հարցերու շուրջ. բայց միութիւնը անհրաժեշտ էր՝ կարեւոր եւ հիմնական կէտերու մէջ. եւ սէրը՝ անոր յայտարար նշանն էր:

ՍՏՈՒՆԵՐ ԵՒ ԼՈՅՍ

Բայց աւա՛ղ... մինչ կը հեռանան դարերը, հորիզոնէն մութ ամպեր կը բարձրանան: Մարդկային նկատումներ, աշխարհի հաշիւներ, փառասիրական զգացումներ, մենատիրական ձգտումներ, քաղաքական այլապէս պարագաներու տակ, կու գան նսեմացնել Սուրբ Եկեղեցւոյ սկզբնական չքնաղ պատկերը: Արդէն իսկ երրորդ դարէն կը սկսին աղէտները. հերձուածներ ու մոլորութիւններ կը խռովեն այդ անդորր միութիւնը. յաջորդաբար աթոռի ու դերագահութեան վէճեր, պատուախնդրական հակաձառութիւններ, մանաւանդ Բիւզանդիոնի շրջանակներուն մէջ, դարերուն հետ կը քաշեն ու խոր ակօսներ կը բանան պառակտումի: Եւ այդպէս, չորրորդ դարէն առկին կը սկսի խախտիլ սերտ միութիւնը. եւ ծնունդ կ'առնեն եկեղեցիներ, բոլորովին անկախ ու ինքնավար, եւ յաճախ տարբեր իրարմէ՝ նոյնիսկ գաւառական հիմնական կէտերու մէջ: Դժբախտաբար, միութեան խախտումով՝ կը պակսի հետզհետէ նաեւ սէրը, ու բաժանումը կը դառնայ աւելի եւս խոր ու մարդկօրէն անդարձանելի, հոգեբանական բարդոյթով մը կընձուտ, ազգայնական ծայրայեղ ձգտումներով ծանրաբեռն:

Բարդ ու երկար է պատմութիւնը հին Եկեղեցիներու բաժանման եւ անոնց յաջորդական դոյառեւումին: Յաճախ լուրջ քննարկներ բաժանեալ եւ ինքնավար եկեղեցի, իր կարգին, ունեցած է ներքին պառակտումներ եւ ճիւղաւորումներ եւս:

Մէկ բան, սակայն, այդ բոլորին մէջէն ակնյայտնի է. թէ միութիւնը խախտած է. այն միութիւնը՝ զոր Յիսուս փափաքած ու յանձնարարած էր, այն միութիւնը՝ որուն համար Քրիստոս իր կեանքը զոհարեցած էր խաչին վրայ: Եւ շատ

լաւ կ'ըմբռնենք թէ այդ միութիւնը սոսկ սիրոյ միութիւն մը չէր: Յիսուս Եկեղեցւոյ միութեան իր օրինակ կու տար այն միութիւնը՝ զոր ունին Ամենասուրբ Երրորդութեան երեք անձերն իրարու հետ, ուր ամէնէն առաջ՝ մօթի, զաղափարի ու կամքի միութիւն մը կայ: Քրիստոսի համար անկարելի է երեւակայել Եկեղեցիներ՝ որոնք լոկ սիրով միացած ըլլան իրարու հետ, պահելով գաւառական խոր տարբերութիւններ: Միութիւնը ամբողջական չէ այդ պարագային: Թողունք որ սէրն ալ յաճախ անյայտացած է:

Հետեւաբար, բարեացակամ ու անկողմնակալ հոգիով Աւետարան կարդացողի մը համար, ամէն հաւատացեալի համար, եւս առաւել ամէն եկեղեցականի համար՝ Եկեղեցւոյ միութեան հարցը ամէնէն աւելի մտահոգիչը պէտք է դառնայ:

Մենք կը համարինք թէ այս հարցը դարերով մտատանջած է բոլոր Եկեղեցիներու հովուապետները. ամէնուն համար եղած է առիթ աղօթքի եւ աշխատանքի. եւ ամէնուն քով ալ միութեան ձգտումը, յայտնապէս կամ լռելայն, տեսականօրէն ապրած է: Լոյսն է այդ աստուածային, թանձր ստուերին մէջ՝ անշէջ:

Արդարեւ, եթէ միայն մեր եկեղեցական պատմութեան ակնարկ մը տանք, յոյներու հետ մեր դարաւոր մաքառումներու ընդմէջէն, քանի՜ քանի միութենական օրհնեալ ձեռնարկներու պիտի չհանդիպինք. միութենական շարժում, որուն մեծագոյն վաստակաւորը եղաւ Սուրբ Ներսէս Շնորհալին, չնորձքի եւ բարութեան այդ Հայրապետը, որուն սիրտը ուրիշ բան չէ փափաքած՝ բայց եթէ միութիւն:

Անշուշտ Քրիստոս օրհնած է այսպիսի սրտեր. օրհնած է ատոնց շնորհիւ՝ նաեւ ամբողջ ժողովուրդներ, ու պահպանած է անոնց Եկեղեցիները դարերով, օր մը հուսկ իրադրութիւն համար իր մեծագոյն իղձը, աստուածային փափաքը բոլորական միութեան:

Եւ մենք կը կարծենք թէ մօտեցած են այդ օրերը:

ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՋ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՅԱԽ

Կաթողիկէ Եկեղեցւոյ շրջանակներէն դուրս, վերջին յիսնամեակի ընթացքին, հսկայ քայլեր առնուած են դէպի միութիւն, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) կազմակերպութեամբ: Իսկ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծոցէն ներս՝ աննախընթաց շարժում մը սկսած է: Եւ կը հաւատանք որ մերս Շնորհալին նման մեծ ու հայրական սիրտ մը, վերջին ժամանակներուս, հսկայ քայլ մը առաւ այս միութենական շարժումին մէջ: Յովհաննէս ԻԳ. Քահանայապետն էր, որ արդարեւ նոր դարադլուխ մը բացաւ, ստեղծելով նոր մթնոլորտ, լայնախոհ ու ազնւական ընթացքով ու մանաւանդ սիրով: Ան պիտոյն իր իսկ կեանքը նուիրել, Քրիստոսի նման, ի լրումն այդ ցանկալի միութեան: Իրադրութեց Վատիկանեան Բ. տիկերական ժողովը, դժուարութիւններու լեռներ խորտակելով, լաւագոյն պայմաններ ստեղծելու համար այդ միութեան. եւ ահա մենք կը քաղենք առաջին պտուղները այդ հսկայ աշխատանքին:

Տիեզերական ժողովի առաջին նստաշրջանին (1962 Հոկտ-Դեկտ.) բաղձաթիւ Եկեղեցիներու ներկայացուցիչներու կարգին, Հայ Եկեղեցին ալ, Անթիլիասի լուսամբի վահակին՝ Զարեհ Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ, ունէր իր դիտորդը՝ յանձին Գարեգին Ծ. Վրդ. Սարգիսեանի: Երկրորդ նստաշրջանին (1963 Սպտ-Դեկտ.), Անթիլիասի նոր դիտորդի կողքին (Արտաւազ Ծ. Վրդ. Թրթեան), որ եկած էր Խորէն Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ, ահա էջմիածնի Կաթողիկոսն ալ՝ Վեհ. Վաղգէն Ա. կը զրկէ երկու դիտորդներ, յանձին Պարգեւ Սրբ. Գէորգեանի եւ Տիար Գրիգոր Պէքմէզեանի (Սիսուան): Դիտորդները մեծ պատիւներու կ'արժանանան նաեւ ժողովի սահմաններէն դուրս. սիրալիր ու մտերմական այցելութիւններ կու տան կաթողիկէ Եկեղեցւոյ մեծամեծ անձնաւորութեանց, փոխադարձ սիրոյ ողջոյններ կը փոխանակեն՝ յանուն իրենց Եկեղեցւոյ Վեհա-

պետներուն, կ'այցելեն զեղարուեստական կեդրոններ, կրօնական Հաստատութիւններ, Հոռոմի մէջ եւ շուրջը, եղբայրական սիրազեղ միջնորդութիւն մը մէջ:

Էջմիածնի զահակալ Վեհ. Վաղդէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անցեալ Հոկտեմբերին, Երուսաղէմ իր այցելութեան շրջանին, մամուլի յայտարարութեամբ մը, ցանկութիւն կը յայտնէ հրապարակաւ՝ շուտով իրադրութեամբ տեսնելու քրիստոնեայ Եկեղեցիներու միութիւնը:

Պէտքութիւն կ'իմանանք որ Անթիլիասի Վեհ. Կաթողիկոսը խորէն Ա. եւ Հայ Կաթողիկէներու Կաթողիկոս – Պատրիարքը՝ Ամենապատիւ Տ. Տ. Իգնատիոս-Պետրոս ԺԶ. փոխադարձ այցելութիւններով ողջունած են զիրար, զրկախառնուած սիրով ու հիւրասիրութեամբ մտերմօրէն:

Եզրիստոնէն կ'իմանանք թէ, Եկեղեցական Մեծաւորներու արտօնութեամբ, տօնի մը առթիւ, հայ Կաթողիկէ եւ լուսաւորչական համայնքները միասնաբար ժամերգութիւն կատարած են, աղօթած՝ միութեան համար, ու քարոզներ են տրուած երկու կողմի Եկեղեցականներէն: Երկուսն էլ միասնաբար «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»։ Եւ սիրոյ համբոյժի պահուն, ժողովուրդը արցունքով ողջունած է յոյսի արշալոյս մը:

ԼՈՒՍԱՒՈՐԵԱՅ, ԵՐՈՒՍԱՂԵՄ

Եւ ահա 1964ի ամանորը կը բացուի միութենական վարդազեղ յոյսերով: Հոռոմի Սրբազան Պապը, Ն. Ս. Պօղոս Զ. Քահանայապետ Երուսաղէմ կ'երթայ ուխտի, Յունուար 4-6ի օրերուն: Համայն աշխարհ կը կեդրոնանայ Ս. Երկրին մէջ. հարիւրաւոր թղթակիցներ, հեռառեսիլի կազմակերպութիւններ, զիւսնազրտական մարմիններ կազմակերպութիւններ, Եկեղեցական Պետեր կը խոսեն Երուսաղէմ, որ անգամ մը եւս կը դառնայ աշխարհի կեդրոն:

Լուսաշող աստղը Երուսաղէմ կը հրաւիրէ զարձեւալ արքաներ, իշխաններ ու Եկեղեցականներ, Քրիստոսի մասերին ու

խաչին քով փնտռելու սկզբնական Եկեղեցւոյ հոգին ու նկարագիրը:

Կը կազմակերպուին հսկայական թափօրներ, ընդունելութիւններ, կը շարժին թաղաւորներ ու վարչապետներ, հրեայ ու մահմետական՝ քրիստոնեային հետ միասին կը պատրաստուին աննախընթաց փառքով ընդունել Պետրոս Առաքելի 262րդ Յաջորդը, որ ուխտաւորի ցուպն առած՝ կու գայ հոն, ուրիշ հալածուեցաւ Պետրոս, շուրջ 2.000 տարի առաջ:

Ծաղկազարդի տեսարանն է, որ կը կրկնուի Ամմանէն Երուսաղէմ, Գամաուկոսի դռնէն Ս. Յարութեան տաճար, մինչեւ Նազարեթ ու Բեթղէհէմ, ուխտաւորացութեան երեք օրերուն ալ: Արմաւի ճիւղեր ու յաղթական կամարներ, զորքեր արեւելեան կը զարդարեն ուղին այս խոնարհ ուխտաւորին, որ թողած զահ ու պերճանք, ահա հետիտն ու աղօթիկեր, նոյնիսկ խանդավառ ժողովուրդին հրմըշտուկին ընդմէջէն, ճիշտ Քրիստոսի նման, կը քալէ, կ'աղօթէ, կ'այցելէ սրբալոյսներ, կ'օրհնէ ու կը քարոզէ. կը խոնարհի Քրիստոսի սուրբ զերեմանին վրայ, կը համբուրէ երկիւղածօրէն Գիթսեմանիի պաղ ժայռը, Յորդանանի ջուրով կը խաչակնքէ ինքզինքը, զմայլանքով կը բարձրանայ երանութիւններու լեռը, կը յափշտակուի պահ մը Թաւրորի բարձունքին վրայ՝ վերջաւայտի ցոլեցողուն մէջ, Գալիլեայի լճակին վրայ կը փնտռէ Պետրոսի նաւակը, Կափառնաուժի ժողովարանին մէջ կը սիրէ լսել Քրիստոսի առաջին քարոզը, կը պատարալէ Նազարեթի տան մէջ, Բեթղէհէմի մասերը կ'որոնէ եւ սարսուռով կը պաշտէ մանկացեալ Աստուածը, փրկիչն աշխարհի:

ՈՂՋՈՅՆ ՏՈՒՔ ՄԻՄԵԱՆՑ

Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, զօհեցին այդ օր մեր սրտերը, մինչ հոգեւին ապրեցանք աննախընթաց զէպքը Եկեղեցւոյ երկհազարամեայ պատմութեան, եւ ներկայ կ'զանք զարուս մեծագոյն կղերական: Մեր ուրախութիւնը մանաւանդ

բազմապատկուեցաւ, երբ մահմետական թաղաւորներու եւ հրեայ վարչապետներու շքերթին մէջ տեսանք ուրիշ խոնարհ Եկեղեցական մը, պատկառելի Հայրապետ մը ահա ալ, Կոստանդնուպոլսոյ Յոյն Տիեզերական Պատրիարքը, Ն. Ամ. Տ. Տ. Աթենագորաս:

Յուզիչ եղան զոյգ ու փոխադարձ հանդիպումները Պետրոսն երկու մեծ Եկեղեցիներու, որոնց միջեւ խղիւժ էր աճէն յարաբերութիւն՝ աւելի քան հինգ դարէ ի վեր:

Ողջադուրումի պահուն, Ն. Ս. Պօղոս Զ. Սրբազան Քահանայապետը այսպէս կը բանաձեւէ իր սրտին զեղումը եւ ուրախութիւնը, լատիներէն ճառով մը, զոր կու տանք ամբողջապէս:

«Անպատում է Մեր յուզումը, խորունկ Մեր ուրախութիւնը այս մեծապէս պատմական ժամուն, երբ դարաւոր լուրսեմէ եւ ակնկալութիւններէ ետք՝ դարձեալ իրարու կը հանդիպին Կաթողիկէ Եկեղեցին եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը, յամբի իրենց ամէնէն բարձր ներկայացուցիչներուն:

«Շնորհակալու զգացումներով եւ սրտակցօրէն կը մերձենանք Ձեզի, որ Մեզի հետ հանդիպելու համար՝ պահ մը ուզեցիք հեռանալ Ձեր Արտոնէն:

«Եւ ամէնէն առաջ պէտք եմ խոնարհաբար շնորհակալութիւն մատուցանել Ամենակարող Աստուծոյ, որ Տէրն է Եկեղեցւոյ:

«Քրիստոնէական իմ աւանդութիւն մը աշխարհի կեդրոն կը նկատէ այն կէտը՝ ուր կանգնեցաւ մեր Փրկչին կենարար կաշքը, որուն վրայ ինք բարձրացած՝ զամէնք իրեն կը հրաւիրէ:

«Պատշաճ էր, ուրեմն – եւ Նախախնամութիւնն ալ այդպէս կարգադրեց – որ այս սուրբ եւ օրհնեալ կեդրոնին մէջ, մենք ուխտաւորներ Հոռոմի եւ Կ. Պոլսոյ, կարեւորագոյն հանդիպիլ եւ միասնաբար աղօթքներ մատուցանել:

«Այսօրուան հանդիպումին Դուք կը տեղեւորէ մեր երջանկայիշատակ նախորդին՝ Յովհաննէս ԻԳ. Պապի օրերէն իսկ. անոր հանդէպ Դուք կը տածէիք սէր ու յարգանք, եւ անոր կը վերագրէիք, խորապափանց ակնարկով, Ս. Յովհաննէս Առաքելի խօսքը՝ թէ «Եղև ալ մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս» (Յովհ. Ա. 6): Ինքն ալ, այո՛, կը բաղձար այս հանդիպումը ունենալ, ինչպէս ծանօթ է Ձեզի. սակայն յեղակարծ մանր քոյլ չտուաւ որ իրականացար իր սրտին այս իդր:

«Սակայն Քրիստոսի խօսքերը, «Զի կղերին մի», զոր մահաւերձ Քահանայապետը կրկին ու կրկին կ'արտաբերէր, անտարակոյս ցոյց կու տան թէ

ատիկա իր ամենասիրելի նպատակներէն մէկն էր, եւ ատոր իրականացումին համար նուիրեց Աստուծոյ իր երկար հոգեվարքն ու քանկագին կեանքը:

«Միւրեքան առաջնորդող հանապաքինները, արդարեւ, կրնան երկար ըլլալ եւ լեցուն խոչընդոտներով ալ, երկուստեք: Սակայն երկու համբաներն ալ իրարու պէտք է գտն, հասնելու համար Աւետարանի աղբիւրներուն: Ու նշանակալից չէ՞ արդեօք որ մեր հանդիպումը տեղի կ'ունենայ այս երկրին վրայ, ուր Քրիստոս հիմնեց իր Եկեղեցին եւ քափեց իր արիւնը անոր համար: Այս եղելութիւնն ինքնին արտայայտումն է այն խոր կամեցողութեան, որ Աստուծոյ շնորհով, միշտ աւելի կը բորբոքի բոլոր քրիստոնեաներուն մէջ. կամեցողութիւն՝ վերցնելու տարաձայնութիւնները եւ խորտակելու արգելքները. կամեցողութիւն՝ յարատեւօրէն փախելու այն համբէն որ կ'առաջնորդէ հաշտութեան:

«Վարդապետական, ծիսական, կարգապահական տարբերութիւնները պէտք է ուսումնասիրուին յարմար տեղին ու տեղը, ճշմարտութեան ծառայելու հոգիով եւ իրերու ուղղադատ մերձեցումով, սիրոյ մթնոլորտի մը մէջ:

«Եւ ինչ որ այժմէն կրնայ եւ պէտք է գարգանայ, ատիկա եղբայրական սէրն է, որ պիտի գիտնայ հնարել նոր համբաներ գործելու. եղբայրական սէր մը՝ որով իւրաքանչիւր ոք, զաս առնելով անցեալի փորձառութիւններ, պատրաստ ըլլայ ներելու, հակամիտի նշմարելու գլխաւորապէս ուրիշին առաւելութիւնները քան թէ վատ կէտերը, եւ ուրիշ քանի չցանկայ՝ բայց եթէ հետեւելու աստուածային Փրկչին հետեւելուն, մերձեցանք անոր եւ տպաւորէ իր մէջ անոր պատկերը:

«Այս սիրոյն քող նշան եւ գրաւական ըլլայ համբոյժը խաղաղութեան, զոր Տէրը քոյլ տուաւ մեզի փոխանցել իրարու, այս սուրբ երկրին մէջ. ինչպէս նաեւ այն աղօթքը, զոր Քրիստոսէն ստուած, միասնաբար պիտի արտասանենք հիմա:

«Քառեր կը պակսին Մեզի արտայայտելու՝ թէ ո՛րքան ազդուած ենք Ձեր այս արարքէն. եւ ոչ միայն Մենք անձնապէս. արդարեւ Հոռոմի Եկեղեցին եւ Տիեզերական Ժողովը մեծ ուրախութեամբ պիտի լսեն այս պատմական դէպքը:

«Իսկ Մենք, գոհութիւն մատուցանելով Ամենակարող Աստուծոյ, կը հայցենք որ սկսուած ուղիին կարենանք ծալքը ժամանել, ինչպէս հաւատով եւ մեծ յոյսով կ'ակնկալենք, եւ Մեր ու Ձեր վրայ գեղած երկնաւոր շնորհներու առաջնորդութեամբ՝ համբիմ ցանկալի նպատակին:

«Այս զգացումներով համակուած, Ձեզմէ կրած ժշտ չէ՛ որ կ'առնենք, այլ ցանկութիւն կը յայտնենք վերստին տեսութեան, նորանոր եւ արդիւնաբեր հանդիպումներու ակնկալութեամբ, յանուն Աստուծոյ» 1:



Ն. Ս. Պողոս Զ. Պապ եւ Արքեպիսկոպոս Պարմ. կ'աղօթեն միասնաբար

Այնուհետեւ միասնաբար երկու Հայ-րապետները կ'աղօթեն, իւրաքանչիւրն իր լեզուով կ'արտասանէ «Հայր մեր»-ը. միասնաբար կ'օրհնեն ներկաները. նուէրներ կը փոխանակեն ու զարձակ կ'աղօթեն սրտազին մաղթանքներով:

Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի... Պարզ քաղաքավարական ձեւակերպութիւն մը չէր ասիկա. այլ զղացուած, մտածուած ու բազմաթիւ զոհողութիւններով իրազործուած հանդիպում մը, ընդոտնելով նոյնիսկ հակառակողներու մթին կեցուածքը: Ինչպէս ծանօթ է, Յունաստանի Եպիսկոպոսներուն, ինչպէս նաեւ սրաւ Եկեղեցւոյ Պատրիարքի շատ հաճոյ չանցաւ Աթենապոլսոյ Պատրիարքի այս արարքը. եւ նոյնիսկ անոր իշխանութեան եւ զերազանութեան մասին խճրճանքով արտայայտութիւններ տեղի ունեցան արեւելքի ուրիշ յարանուանութեանց կողմէ:

Սակայն Աթենապոլսոյ մեծանձն զըտնուեցաւ ու իսկապէս բարեացակամութեամբ լեցուն: Վստահ ենք թէ Աստու-

ծոյ եւ Քրիստոսի հաճելի արարք մը կատարեց, ամէն մարդկային ակնածանք արհամարհելով, սիրոյ հողիէն առաջնորդուած: Սկիզբն եղաւ նոր դարաշրջանի մը այդ հանդիպումն ալ, ինչպէս Ն. Ս. Պողոս Պապին երթը Երուսաղէմ:

Եւ այս անգամ լուսաշող աստղ մը չէր որ, կը կարծենք, հրաւիրեց զանոնք Բեթղէմ, այլ նոյն ինքն Քրիստոս, արդարութեան արեւակը եւ փրկութիւնը տիեզերքի: Կրկնակի, ուրեմն, Երուսաղէմ դարձաւ կեդրոն աշխարհի, կեդրոն միութեան, կեդրոն հաշտութեան:

Ուրախ լեր, բերկրեալ, հարսնացեալ Սուրբ Եկեղեցի. պայծառացո՛ղ զմանկունս քո յօրինաբանութիւն ծագողին զշող լուսոյ ի քեզ, Մայր Եկեղեցի:

1. Թարգմանութիւնը կատարուած է լատիներէն բնագրէն, որ հրատարակուած է Acta Apostolicae Sedis պաշտօնաթերթին մէջ: Հտ. ՅՁ. Թ. 3 (21 Մարտ, 1964) էջ 171-173: Ամփոփոյթ մը կայ «Սիոն» ամսաթերթին մէջ, 1.6 տարի (1964) Թ. 1-2, էջ 6:

Ն. Ս. ՊՈԼՈՍ Զ. ԵՒ ՀԱՅՆԵՐԸ

Ն. Ս. Պողոս Զ. Պապի Երուսաղէմ այցելութեան առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին կողմէ, Վեհափառ Խորէն Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ՝ Երուսաղէմ կը մեկնի պատկանելի Պատուիրակութիւն մը, որուն անդամներն են Լիբանանի Հայոց Առաջնորդ Գրչ. Տ. Տաճատ Ս. Արքեպիսկոպոս, Անթիլիասի Դպրեկանքի Տեսուչ Գեր. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Սարգիսեան եւ Գեր. Տ. Արտաւազդ Ծ. Վրդ. Թրթռեան:

Յունուար 4ին, կէսօրէ ետք, Երուսաղէմի մուտքին առջեւ, Դամասկոսի Դրան մօտ, Ն. Ս. Պողոս Զ. Պապի ընդառաջ էին փութացեր Երուսաղէմի Հայոց Սրբ. Պատրիարք Հայրը՝ Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկ. Տէրաւեան, ընկերակցութեամբ Լուսարարապետ Գրչ. Հայրիկ Ս. Արքեպիսկոպոսի եւ Ժառանգաւորաց Տեսուչ Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի, ինչպէս նաեւ Ն. Ս. Օ. Խորէն Ա. Կաթողիկոսի երեք ներկայացուցիչները, ի շարս այլ եկեղեցական Պատերու, քաղաքական անձնաւորութեանց եւ զիւանդիտական ներկայացուցիչներու:

Նոյն օրը, երեկոյեան Ժամը Տին, նախօրօք ճշտուած յայտարարի մը համաձայն, Երուսաղէմի Պապական Նուիրակի ապարանքին մէջ, Ն. Ս. Պողոս Զ. Սրբ. Քահանայապետին կ'այցելեն Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկ. Տէրաւեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ներկայացուցիչները, բարի դալուստ մաղթելու Նորին Սրբութեան եւ յայտնելու իրենց ջերմ խնդակցութիւնները՝ այս պատմական ու շնորհաբեր այցելութեան համար: Ընդունելութեան ներկայ եղած են Ծիր. Չիբոնեանի եւ Քրիստոնէական Միութեան Քարտուղարութեան Գեր. Ուիլյամսն եւ Հայր Տիմիթի:

Այդ առիթով Ն. Ս. Պողոս Զ. անդիլիւրէն լեզուով կ'ուղղէ փոքրիկ ճառ մը.

«Յատկապէս շնորհապարտ եմք այն ազնիւ ընդունելութեան համար զոր ցոյց կու տաք Մեր նըկատմամբ՝ Մեր ուխտաւորութեան առիթով, այս

բաղափն մէջ, որ սրբացած է փրկագործութեան այն մեծ խորհուրդներով, զոր մեր Տէրը եւ Փրկիչը Յիսուս Քրիստոս իրագործեց այստեղ:

«Մեր հանդիպումը մասնաւոր նշանակութիւն մը ունի այն բարեկամական կապերուն համար, որոնք մշակուեցան Մեր եւ Հայաստանայց Եկեղեցւոյ միջեւ՝ Վատիկանեան Բ. Ժողովի աշխատանքներուն մասնակցող Դիտորդներուն միջոցաւ: Իսկական քրիստոնէական սիրոյ եւ հասկացողութեան այն ոգին՝ զոր անոնք յայտնաբերեցին, Մեզ առաւել եւս վստահացուց այն եղբայրական ընդունելութեան նկատմամբ՝ զոր պիտի գտնէինք Ձեր եւ Ձեր հաւատացեալներուն մօտ: Մեր ակնկալութիւնները աւելի քան լիովին իրականացան:

«Ոգի մը կայ որ հետզհետէ կը տիրապետէ քրիստոնէաներուն մէջ: Փափաքն է այդ՝ տարածելու ինչ որ կը քելագրէ Հեքսոսներու Առաքելութեան ինչ որ անցեալին կը պատկանէ, եւ դիմել դէպի ապագան, մեր աչքերը սեւեռելով Յիսուսի վրայ, որ հեղինակն է եւ վախճանը մեր հաւատքին: Այս ոգին արդէն իսկ դրապէս կը յայտնաբերուի այս սուրբ Քաղաքին մէջ, այն նիգերով՝ զոր համերաշխօրէն կը քափեն բոլոր քրիստոնէաները, յարգալիք խնամքով եւ պատշաճ պաշտամունքով պատուելու համար նուիրական այս վայրերը, ուր մեր Տէրը, խաչին յաղթանակով եւ մահուան պարտութեամբ, իրագործեց հաշտութեան այն մեծ առաքելութիւնը՝ զոր ստացած էր Հօրմէն:

«Հրեւումնով կ'ողջունենք քրիստոնէական սիրոյ այս գեղումը եւ անկեղծօրէն կ'ըզմանք որ բազմապատկուի եւ ամէն գեղմի վրայ տարածուին քրիստոնէական համագործակցութեան այս աշխատանքները:

«Մենք եկած ենք այս սուրբ Քաղաքը որպէս աղօթար ուխտաւոր: Աստուծոյ, մեր Հօր, եւ մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի, Աստուածորդւոյ մասնացած Մեր աղօթքներուն մէջ՝ կը յիշենք Ձեզ, եւ այն հօտը՝ որուն հովիւն էք: Թող աստուածային շնորհներ եւ բարիքներ առատօրէն իջնեն Ձեր բոլորին վրայ»:

Պատրիարք Սրբազանը պատասխանելով այս զգացումներուն եւ մտածումներուն, կը յայտնէ Հայաստանայց Եկեղեցւոյ ուրախութիւնը Նորին Սրբութեան Երուսաղէմ Ժամանումին առիթով, կը յիշէ թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը իր առաքած պատգամաւորներով կը մասնակցի այդ ուրախութեան, կը շնորհակալ ըլլալ:

2. Բնագիրը տես Acta Apostolicae Sedis պաշտօնաթերթին մէջ, տեղ, էջ 164-165: Ամփոփոյթ մը կայ «Հասկ» ամսաթերթին մէջ, 1.6 տարի (1964), Թ. 1, էջ 24:

քան մեծ պատիւ մըն է Ս. Քաղաքին համար՝ Նորին Սրբութեան այցելութիւնը, եւ ի վերջոյ, ի խորոց սրտի կը մաղթէ որ Յովհաննէս ԻԳ. Սրբ. Պապին օրով սկսած զործերը, որոնք կը շարունակուին մեծ նախանձախնդրութեամբ, արդիւնաւորութիւն յաւան Բրիտանիոյ եկեղեցիին:

Այդ առիթով՝ Սրբ. Պապը յիշատակի մեծաշնորհ կը բաշխէ այցելուներուն եւ ոսկեղօծ ու ականաւոր սկիւն մը կը նուիրէ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին:

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ն. Ս. Պօղոս Զ. Սրբազան Քահանայապետը Յունուար 6ի առաւօտեան ժամը 10.45ին կ'այցելէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը, արժանանալով փառաշուք ընդունելութեան: Սրբ. Պապին կ'ընկերանային երեք Ծիրանաւորներ, Վ.Վ. Տ.Տ. Թիւրքան, Զիքոնեանի եւ Թեաթա, Երուսաղէմի Պապական Նուիրակը, Բրիտանիական Միութեան Քարտուղարութեան Ներկայացուցիչները: Ներկայ էին նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակները:

Վանքի աւագ դռնէն մինչեւ Պատրիարքարանի չեզ կ'աշխարհ ճամբան ծածկուած է թանկագին զորդերով: Ամբողջ Միաբանութիւնը, Ամենապատիւ Պատրիարք Հայրը, բազմաթիւ Եպիսկոպոսներ ու Վարդապետներ, Վանքի աւագ Դռնէն կ'ընդունին Սրբ. Քահանայապետը, որ ժողովուրդի ծափերուն եւ դպրոցական աշակերտներու եւ պատուիրակներու արիններու շարքերուն մէջէն կ'առաջնորդուի Պատրիարքարանի լուսաշող դահլիճը:

Սրտապին այս ընդունելութիւնը կ'ըսէ «Սիոն»ի յօդուածագիրը - խորապէս տրւաւորած կը թուէր Նորին Սրբութիւնը, որ հակառակ իր յօդուածեան, զուարթ էր ու քաղցրօրէն կը ժպտէր բոլորին, չոյլով զպրոցական աշակերտներու աշտերը:

Պատրիարքական դահլիճն վրայ, Նորին Սրբութիւնը յստակապէս օրհնեց զահլիճը

լեցնող բազմութիւնը, ապա բազմեցաւ: Ամենապատիւ Պատրիարքը Սրբ. Հայրը, հայերէնով, կարգաց բարեկալութեան հետեւալ ուղերձը.

«Յանուն Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, Բրիտանիական սիրով ու եղբայրական ոգիով կ'ողջունենք Ձերդ Սրբութիւնը, դարաւոր այս Հաստատութեան մէջ:

«Ուրախ եմ որ Ձեր նկատմամբ մեր այս յարգանքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Մեծի Տանն Կիլիկիոյ Արքեպիսկոպոս Գաեակալ Տ. Տ. Խորէն Ա. Կարողիկոսի ներկայացուցիչները, ամբողջական ընելու համար Հայց. եկեղեցւոյ յարգանքի տուրքը Ձերդ Սրբութեան հանդէպ:

«Առաքելական այս Հաստատութիւնը, գոր աշուր Ձեր անձին շուքով կը լեցնէ, առիթներ ունեցած է իր մէջ ողջունելու երջանկաբեր այցելութիւնը իշխաններու եւ արքաներու, ինչպէս կը վերկայեն այս դահլիճին պատկերները:

«Սակայն, առաջին անգամն է որ բախտաւորութիւնը կ'ունենայ վայելելու շնորհաբեր ներկայութիւնը իշխաններու իշխանին Արքեպիսկոպոս Գաեակալ մեծ աշխարհին - յանձին Ձեր Սրբութեան: Ձեր այս այցելութիւնը կը նկատենք ոչ միայն պատիւ մը Պատրիարքարանիս, այլ նաեւ Հայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին, որ առաջին անգամը չէ որ առաքելայ կ'ըլլայ Կարողիկոս մեծ եկեղեցւոյ Գերագոյն Պետի բարձր ուղարկութեան:

«Ձեր անմախքաց եւ պատմական ուխտաւորութիւնը ի Սուրբ Երկիր, Ձեր անձին շնորհի մէջէն նոր փայլ մը եւ նոր գոյն մը կ'աւելցնէ Բրիտանիական այս փառքին, որ մեր Տիրոջ արիւնովն է սրբագործուած եւ ստով դարձած ներշնչարան Բրիտանիական սերունդներու, եղբայրութեան, նուիրումի, միութեան եւ սիրոյ ոգիով եւ խորհուրդով:

«Այս առիթով ի սրտէ կը մաղթենք որ մեր երկնաւոր Հայրը, որ իր Միածին Որդին տուաւ մարդկութեան այս Սուրբ Քաղաքին մէջէն, օրհնէ եւ պողաբերէ Ձերդ Սրբութեան բոլոր անձինքն ու գործերը, յօգուտ Բրիտանիական եկեղեցիին, անոր միութեան, ամբացումին եւ հոգեւոր վերակենսաւորումին:

«Ձեր հետ մենք ալ կը հաւատանք որ եկեղեցին, ինչպէս միշտ, այսօր ալ կոչուած է մարդկութեան բերելու Բրիտանիական պատգամը, կենդանի վկայութեամբ եւ միասնական, ներդաշնակ ծառայութեամբ, ի փառս Աստուծոյ եւ ի խաղաղութիւն աշխարհիս»:

3. Բնագիրը տե՛ս «Սիոն»ի (էջ 8) եւ «Հասկ»ի (էջ 25) վերոյիշեալ թիւերուն մէջ:

Ուղերձին անդիւրէնէն թարգմանութիւնը կ'ընէ Գրչ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Սարգիսեան:

Սրբազան Քահանայապետը իտալերէն լեզուով իր ամենաջերմ շնորհակալութիւնը կը յայտնէ փառաւոր այդ ընդունելութեան համար: Յատուկ ուրախութիւն՝ որ Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը ներկայացուցիչներ զրկած է զինք գերմաւորելու համար Երուսաղէմի մէջ: Համոզումն անկեղծ եւ ուժեղ չեղաւ Ն. Սրբութիւնը կը խօսի հայ ժողովուրդի բացառիկ այն քաջութեան եւ հերոսութեան մասին՝ զոր ան պատմութեան մէջ յայտնաբերած է իր հաւատքի աննկուն կամքով եւ հաւատարմութեամբ:

Սրբ. Պապին խօսքերը անդիւրէնէնի կը թարգմանուին Գեր. Ուիլյամսի կողմէ: Ահա «Սիոն»ի տուած տմբոյնը.

«Սուրբ Երկիր Մեր ուխտագնացութեան առիւ, երջանիկ եմ հանդիպում ունենալով Ձերդ Ամենապատուութեան հետ, եւ գիտակից եմ այն խոր նշանակութեան, որ կը ստանայ այս հանդիպումը Երուսաղէմի մէջ:

«Այսօր կ'ուզենք շնորհակալութիւն յայտնել Ձեր այն ընդունելութեան համար, որ վերապահունեցաւ Մեզի Ձեր Միաբանութեան եւ հաւատացեալներուն կողմէ: Շատ գգածունեցանք այն գործովանքին ու յարգանքին համար, որուն առաքելայ դարձանք: Նոյնպէս ուրախութեամբ իմացանք որ անկեղծ գործակցութեան մթնոլորտ մը կը տիրէ հիմա կարողիկէ համայնքին ու հայ համայնքին միջեւ՝ Սուրբ Յարութեան Տանքի նորոգութեան համար: Այս սրբալայքը Բրիտանիական սրտերու համար աշխարհի մէջ գոյութիւն ունեցող ամենէն քանակազին բանն է:

«Արդարեւ ասկիւս ճիշտ այն վայրն է, ուր Աստուած ուզեց բոլոր Էակներուն հետ հաշտուիլ Բրիտանիական միջոցաւ, խաղաղութիւն կնքելով Անոր խաչին արիւնով, ուր փառաւոր յարուցեալ Բրիտանիական մեր կենսական սկզբունքը, մեր յարութեան գրաւակներ, միակ պետք, որուն մէջ աւելն բան պէտք է միաձուլուի: Բարձրօրէն խորհրդանշական է որ, հակառակ պատմութեան ծանրութեան եւ բազմաթիւ դժուարութիւններու, Բրիտանիական դժբախտաբար բաժնուած, միասին կ'աշխատին նորոգելու այս Տանքը, գոր կերտած էին միութեան մէջ, եւ որ կ'աւելն իրենց բաժանումով:

«Մեր ամենէն ջերմ մաղթանքն է որ սերը տիրէ մեր միջեւ, իսկական սէր մը, անպակաս:

«Գիտենք թէ ինչ է անճակաւն դերը Ձերդ Ամենապատուութեան, մթնոլորտի այս փոփոխութեան մէջ. ծանօթ եմ այն ճիգերուն, որոնք երկուստեք կը քափուին՝ վիճելի կետերը անհետացնելու համար. ուստի խորապէս ուրախ եմ եւ կ'արտայայտենք Մեր ամբողջ երախտագիտութիւնը: Թող խաղաղութեան Աստուածը իր շնորհը առաւօրէն տնդացնէ Ձերդ Ամենապատուութեան, Ձեր Միաբանութեան եւ Սուրբ Քաղաքի Ձեր բոլոր գաւակներուն վրայ»:

Նորին Սրբութեան խօսքերէն ետք, Ամենապատիւ Պատրիարք Հայրը Սրբ. Քահանայապետին կը նուիրէ թանկագին յաւիթներով զարդարուն սքանչելի խաչ մը, որուն ի տես Նորին Սրբութիւնը կը բացաղանչէ. «Շատ գեղեցիկ է»: Իսկ Նորին Սրբութիւնը Պատրիարք Սրբազանին կը նուիրէ ոսկիէ եւ արծաթէ մետաղներ:

Պատրիարքարանի դահլիճին մէջ Նորին Սրբութիւնը երբ հրաժեշտ կ'առնէր Պատրիարք Սրբազանէն, սուր աղնարկով մը զննելէ ետք Պատրիարքարանի դահլիճը, կ'ըսէ. «Երբեք չէի կարծեր որ այսօր ամեն տեղ ունենաք Սիոնի բարձունքին վերայ, եւ այս կարգի շէնք Պատրիարքարան մը, որ վար չի մնար վատիկանի դահլիճին»: «Ձերդ Սրբութիւն, կը պատասխանէ խօսքին Սրբ. Պատրիարքը, Ձեր հոս գալէն առաջ անկալ չէր կրնար համեմատուիլ վատիկանի դահլիճին հետ, բայց Ձեր գալէն վերջ՝ ալ կրնայ...»:

Նորին Սրբութիւնը անոյժ մը կը ժպտի եւ յետոյ կ'աւելցնէ. «Դուք Հայերդ ուրիշ էք, անցեալ ունիք եւ Բրիտանիական մեծ ժողովուրդներէն էք»:

Ապա Սրբ. Քահանայապետը հրաժեշտ կ'առնէ Պատրիարք Հօրմէն ու Միաբանները:

4. «Սիոն»ի մէջ (անդ, էջ 10), ինչպէս նաեւ աղ-դային թերթերուն մէջ լոյս տեսած այս ճառին սոյն պարբերութեան սէր բոլոր թարգմանուած է ողորմութիւն: Carità, charity, որ կրնայ նշանակել նաեւ ողորմութիւն, սոյն նախադասութեան մէջ կը նշանակէ սէր, մանաւանդ՝ եղբայրական սէր: «Dio è carità» նախադասութիւնը մենք կը թարգմանենք «Աստուած սէր է»: ողորմութիւն բոլոր այդ տեղ իմաստ չունի:

5. Հրատարակուած միայն «Սիոն»ի մէջ, անդ, էջ 9-10:

նութենէն, որոնք զինքը կ'առաջնորդեն մինչեւ վանքին աւագ դուռը, եւ աջահամբոյրներու եւ ծափերու տարափին տակ կը բաժնուին իրարմէ:

ՌԻՐԱՆ ԼԵՐ, ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ


Ուրախ լե՛ր, Սուրբ Եկեղեցի: Հոռմէն մինչեւ Երուսաղէմ եւ Անթիլիաս թող հնչեն զանգերն ուրախութեան, Ծնունդի զիշերուն ցնծադին երգերով, եւ սիրուն աշխարհէ աշխարհ աւետիսն հաշտութեան եւ սիրոյ: Հաշտութիւն եւ սէր՝ որ ահա կը բողբոջին բարեացական հոգիներու մէջ, Յոյներու Տիեզերական Պատրիարքի սրտին մէջ: Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի սեմէն ներս, Անթիլիասի կամարներուն տակ:

Սէրը սկիզբն է, ճամբան է միութեան. սէրը՝ նպատակ կամ վախճանը չէ, ոչ ալ լրումը կամ ամբողջութիւնը միութեան:

այլ այն հիմնական տրամադրութիւնը՝ որ կ'առաջնորդէ միութեան. ուր կայ անկեղծ ու բոլորակա՛ն սէր՝ հոն անպատճառ կու գայ նաեւ միութիւնը:

Սէր՝ նախ եւ առաջ Քրիստոսի եւ Եկեղեցւոյ հանդէպ. սէր՝ որ մեզ կը դարձնէ նախանձախնդիր Սուրբ Եկեղեցւոյ փառքին ու պայծառութեան, այնպէս՝ ինչպէս Քրիստոս կ'ուզէր: Իրականացնել Քրիստոսի բաղձանքը. իրականացնել Յովհաննէս ԻԳ. Պապի բաղձանքը. իրականացնել Ստեփանոս Յովակիմեան Սրբազանի բաղձանքը:

«Քրիստոս մէկ հատիկ ստեղծեց իր Եկեղեցին», ըսած է օր մը, Յովակիմեան Սրբազանը՝ Գերպո՛. Ռոմքալիին (ապագային Յովհաննէս ԻԳ. Պապ), Պուլիա-րիա գտնուած չըջանին, եւ աւելցուցած է թէ «մենք Եկեղեցականներս է որ զայն բաժան բաժան ըրած ենք». ու այս իր վեհափառ պարզութեամբը հասկցուցած:



Ն. Ս. Պօղոս Զ. Պապ եւ Եղիշէ Պարթ. նուէրներ կը փոխանակեն

է լատին երիտասարդ եկեղեցականին՝ թէ հասած է ժամը վերադառնալու նախկին միութեան, եւ սուրբ Եկեղեցին վերադարձնելու իր նախկին պայծառութեան: Մանանեխի հատիկին նման ալ խօսքը ա՛ծած է Յովհաննէս ԻԳ. Քահանայապետի նման եկեղեցականի պարզունակ ու անկեղծ սրտին մէջ եւ պողարեւած հարիւրապատիկ. թերեւս ալ օրուան միութեան հաւան շարժումն ալ արդիւնքն ըլլայ այդ երկու պատկառելի Հայրապետներուն՝ Յովհաննէս ԻԳ. Պապի եւ Յովակիմեան Սրբազանի աղօթքներուն ու բարեխօսութեան:

Միութեան անհրաժեշտ պայման է՝ սէր եւ յարգանք տածել փոխադարձաբար Եկեղեցիներու եւ Եկեղեցականներու հանդէպ, ըլլան անոնք յոյն կամ ասորի, զրադ-տի կամ լատին: Տեսնել իրարու մէջ մի-այն լուսուոյն կէտերը, զնահատել փոխադարձ առաւելութիւնները, առանց տար-ուելու ցեղային հին հաշիւներէ: Այդ սէրն ու զնահատանքն է որ պիտի մղէ մեզ ան-տեսելու նաեւ անցեալին սխալներն ու եր-կուտեք կատարած թերացումները, ինչ-պէս կը յանձնարարեն մասնաւորապէս վերջին երկու Քահանայապետները, եւ ներդաժառութեան ոգիով, որ քրիստոնէ-ական նկարագրին էական տարրն է, զի-տակից մեր տխուր պատմութեան, սիրել զիրար, այնպէս՝ ինչպէս կը յանձնարարէ Ս. Աւետարանը:

Եւ համբոյրն հաշտութեան՝ զոր փոխա-նակեցին Պօղոս Զ. Սրբազան Քահանայա-պետն ու Աթենագորոս Տիեզերական Պա-տրիարքը, ըլլայ առաջին քայլն այն բոլո-րական միութեան, որ թէեւ հեռու, սա-կայն հորիզոնին վրայ փառլիով Ծնունդի լուսաշող աստղին նման կ'ուրախացնէ մեզ ու բոլոր քրիստոնեաները:

Այս սէրն է որ պիտի զիւրացնէ ամէն

ինչ, որ պիտի հալեցնէ սառը եւ պիտի հարթէ լեռնախուտակ զժուարթութիւննե-րը, որոնք բազմատեսակ են ու դարաւոր ծանրութիւն մը ունին: Այս սէրն է որ փո-խանակ հինցած բանավէճեր նորոգելու, պիտի ստեղծէ մտերմական խօսակցու-թիւն մը, Եկեղեցիներու միջեւ, հանդարտ տքամազրութիւններով ուսումնասիրելու հարցն իր ամբողջութեամբ, հասնելու համար ցանկալի միութեան, յարգելով նաեւ փոխադարձաբար տոհմային օրինա-զրքերն ու նուիրապետական կարգերը, յարգելով նոյնիսկ աստուածաբանական բանաձեւումները:

Այս սէրն է որ պիտի մղէ մերօրեայ ե-կեղեցականները վերադառնալու Եկեղեց-ւոյ սկզբնական միութեան, որուն զեղե-ցիկ պատկերը ներկայացուցինք մեր զրու-թեան սկիզբը, Պողիկարպոս Զմիւռնիա-ցիի եւ Անիկեոսի Պապի հանդիպումի պատմական զէպքին մէջ:

Անշուշտ Աթենագորոս Պատրիարքն ալ յղ միութեան կ'ակնարկէր՝ երբ ընդու-նելով Ն. Ս. Պօղոս Զ. Քահանայապետի նուէրը, սուրբ սկիհը, փափաք կը յայտ-նէր որ Աստուծոյ օրհնութեամբ՝ կարե-նար օր մը միասին հաղորդուիլ այդ սուրբ բաժակէն, միասին արբենալ Յիսուսի կե-նարար արիւնով:

Ի՛նչ ուրախութիւն մեզի Հայերու հա-մար, եթէ այդ երջանիկ օրը, Հայոց Կա-թողիկոսն ալ կանգնէր, Լուսաւորչի կան-թեզն իր ձեռքին, միեւնոյն խորանին վը-րայ, իր նուիրական վեղարով, միւս Հայ-րապետներու կողքին, միասին հաղոր-դուելու նոյն սուրբ Խորհուրդէն աստուա-ծային միութեան:

Եւ ամէնքս միարեան հրճուանքով զո-չէինք. Ուրախ լե՛ր, Սուրբ Եկեղեցի:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ